


ԵՊՀ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՍԲԻՈՆ



**ФАКУЛЬТЕТ ГЕОГРАФИИ И ГЕОЛОГИИ ЕГУ
КАФЕДРА СОЦИАЛЬНО - ЭКОНОМИЧЕСКОЙ ГЕОГРАФИИ**

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ, ՊՐՈՖԵՍՈՐ ԹԱՂԵՎՈՍ ԽԱՉԱՏՈՒՐՈՎ
ՀԱՎՈՐՅԱՆԻ ԾՆՆՆՅԱՆ 100 ԱՍՅԱԿԻՆ ԵՎԻՐՎԱԾ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԳԻՏԱԺՈՂՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

РЕСПУБЛИКАНСКАЯ КОНФЕРЕНЦИЯ С МЕЖДУНАРОДНЫМ УЧАСТИЕМ,
ПОСВЯЩЕННАЯ 100-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ ЗАСЛУЖЕННОГО
ДЕЯТЕЛЯ НАУКИ, ПРОФЕССОРА *ТАТЕВОСА ХАЧАТУРОВИЧА АКОПЯНА*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԵՐԿՐԵՐԻ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՀԻՄՆԱԽՂԻՐԵՐԸ

(28-29 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2017 Թ.)

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ И РАЗМЕЩЕНИЯ ХОЗЯЙСТВА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И СТРАН БЛИЖНЕГО ЗАРУБЕЖЬЯ
(28-29 СЕНТЯБРЯ, 2017 Г.)

ԵՐԵՎԱՆ
ՄԵՎՆԱՐԿ
2017
ЕРЕВАН 2017

ԶՐՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԿԼԱՍՏԵՐՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՄԱՐՑԱԼՆԵՐԸ ԳՈՐԻՍԻ ԵՆ ՏԱԹԵՆՍԱՐԾԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Է.Ռ. Դուրգարյան, աշխ.գիտ.թեկ.ասիստենտ, ԵՊՀ
eliza.durgaryan@ysu.am

Բանալի բառեր. տարածաշրջան, կլաստեր, զբոսաշրջային ինդուստրիա, զբոսաշրջային ռեսուրսներ, ենթակառուցվածք, զարգացման ներուժ:

Զբոսաշրջային գործունեության կազմակերպման գործում շատ գիտնականներ են փորձեր կատարել վերլուծելու, համակարգելու անհրաժեշտ գործոնները [1]:

Պորտերի տեսության համաձայն՝ կլաստերը (համախումբ) կենտրոնացված աշխարհագրական հատկանիշով փոխկապակցված ընկերությունների, կազմակերպությունների ամբողջություն է, որոնք մրցակցում են միմյանց հետ և միևնույն ժամանակ իրականացնում են համատեղ աշխատանք: Կլաստերի չափերը տատանվում են առանձին համայնքից մինչև պետության կամ պետությունների սահմաններ: Կլաստերը որպես տարածաշրջան ունի հստակ մրցակցային առավելություններ այլ տարածաշրջանների համեմատ:

Վերջին տասնամյակներում բազմաթիվ երկրներում կլաստերների նկատմամբ գոյություն ունի մեծ հետաքրքրություն, իբրև վերլուծության միավորի:

Ըստ Պորտերի՝ ճյուղային արդյունաբերական քաղաքականության կլաստերային մոտեցման առավելություններից են համարվում.

- միմյանց լրացնող ռազմավարական խմբերի (գնորդներ, մատակարարներ, լրացնող հաստատություններ) փոխազդեցության վերլուծությունը,
- որոշակիորեն մրցակից համարվող, բազմակիորեն փոխկապակցված տարբեր ճյուղերի կազմակերպությունների համագործակցությունը,
- մասնավոր-պետական գործընկերության մեխանիզմների կիրառումը: Այս գործընկերությունը տեղի է ունենում արտադրողականության բարձրացման, մրցակցության ամրապայտման և սիներգետիկ արդյունքի շրջանակներում [6]:

Սյունիքի մարզում, մասնավորապես, Գորիսում և Տաթևում, զբոսաշրջային ինդուստրիայի զարգացմանը նպաստել են այն տարածքները, որոնք իրենց մի շարք առավելությունների շնորհիվ առաջնային նշանակություն ունեն և կարող են հանդիսանալ զարգացման կենտրոններ: Հանրապետությունում այսօր Տաթևի և Գորիսի տարածքները արդեն դարձել են *առաջատար զարգացման կենտրոններ*՝ իրենց հարուստ պատմամշակութային և բնական հուշարձանների առկայության շնորհիվ [5]:

Գորիսի և Տաթևի տարածաշրջաններում կատարված քարտեզագրման շնորհիվ պարզվել է, որ որպես զբոսաշրջային կլաստերներ կարելի է դիտարկել համայնքային միավորները: Զբոսաշրջության գրավչությունները այստեղ համաչափ կարգով չեն բաշխված, և կարելի է ասել, որ դրանց տարածական բաշխումը կախված է պատմական բնութագրից, կլիմայական ու երկրաձևաչափական պայմաններից, ինչպես նաև սոցիալ-տնտեսական իրավիճակից:


Առանձնացված զբոսաշրջային կլաստերները իրենց սահմաններով համապատասխանում են Գորիսի նախկին վարչական շրջանին, ունի 1 քաղաքային և 22 գյուղական բնակավայր [3], (նկ. 1):

Գորիսի տարածաշրջանն աչքի է ընկնում բնական և մարդածին զբոսաշրջային ռեսուրսների հարուստ բազմազանությամբ, որոնք իրենց ամբողջությամբ արտահայտում են:

այս կլաստերի համապարփակ պատկերը: Այն արտահայտվում է ենթակառուցվածքներով, բնապատմական հուշարձանների յուրատիպությամբ և ազգային մշակութային առանձնահատկություններով: Զբոսաշրջային կլաստերների ներուժն առավել մեծացավ հատկապես «Տաթևեր» ճոպանուղու և Խնձորեսկի «Ճոճվող» կամրջի կառուցմամբ, որն արտահայտվում է զբոսաշրջիկների հոսքի ակտիվացմամբ և տարեցտարի նրանց թվի ավելացմամբ: Գորիսի, Տաթևի զբոսաշրջային կլաստերներում մեծ դերակատարում ունեն զբոսաշրջային մարդածին ռեսուրսները, որոնք արտահայտում են տեղաբնակների հոգևոր, մշակութային հարուստ անցյալը, ապրելակերպն ու սովորույթները: Հանրապետության մեջ դրա վառ ապացույցն է համարվում միակ քարանձավային բնակատեղին՝ Խնձորեսկը իր ժայռափոր, նույնիսկ երկհարկ կացարաններով:

Այս կլաստերներում մասնագիտացված զբոսաշրջության ուղղություններ են համարվում պատմամշակութային, գիտաճանաչողական, զբոսաշրջությունները, ազրոզբոսաշրջությունը և էկոզբոսաշրջությունը: Զբոսաշրջային հիշատակված հնարավորությունները ստեղծում են նպաստավոր պայմաններ տարածաշրջանում կազմակերպելու ներքին և ներգնա զբոսաշրջության բազմաճյուղ ինդուստրիա:

Նկար 1. Գորիսի, Տաթևի տարածաշրջանների առաջարկվող կլաստերներ:



ացվածքներով, մշակութային ել մեծացավ սցենար, որն նրանց թվի արում ունեն մերի հոգևոր, տության մեջ նձորեսկը իր

ն համարվում շրջությունը և ստեղծում են և ներգնա

ՀՀ կառավարության կողմից 2013թ.-ի հունվարի 31-ին հաստատվել է Գործիս քաղաքում գրոսաշրջության զարգացման նոր ծրագիր: Այդ ծրագրում նախատեսված էր Գործիսը դարձնել մեր հանրապետության չորրորդ գրոսաշրջային քաղաքը [2]:

ՀՀ կառավարության կողմից 2015թ.-ի ապրիլի 29-ի հաստատվել է «Տաթև» ազգային պարկ ստեղծելու ծրագիրը: Այն կապահովի տարածքի էկոհամակարգերի և հարուստ կենսաբազմազանության պահպանությունը:

Հիմք ընդունելով վերլուծական ելակետային նյութը [4], առաջարկվում է Գործիսի, Տաթևի կլաստերների ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների ու սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծությունները՝ (աղյուսակ 1-ում):

Աղյուսակ 1.

Գործիսի, Տաթևի գրոսաշրջային կլաստերների ՈւԹՀՄ (SWOT) վերլուծությունը

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅՆ ԿՈՂՄԵՐ
<ul style="list-style-type: none"> • Հայաստանը ԼՂՀ-ին և Իրանին կապող միջպետական ճանապարհ, • բնական և մարդածին գրոսաշրջային ռեսուրսների հարուստ բազմազանություն, • անհրաժեշտ ենթակառուցվածքների առկայություն, • «Տաթևի» վանական համալիրի մեծ ճանաչվածություն, • նոր զարգացող արկածային, լեռնազնային, խոհանոցային, ագրո, էկո գրոսաշրջության ճյուղեր, • հարուստ մշակութային ավանդույթներ, • պետական հոգածություն իրականացվող ծրագրերի միջոցով: 	<ul style="list-style-type: none"> • Զրոսաշրջային ներուժի տարերային և ոչ լիարժեք օգտագործում, • ծառայությունների ոլորտում սպասարկող անձնակազմի մասնագիտական ցածր կարողություն, • հարողակցության ուղիների վատ որակ, • տեղեկատվական կենտրոնների բացակայություն, • գնային մրցակցության գերազանահատում, • մշտական մոնիտորինգի և աուդիտի պակաս, • տեսարժան վայրերի ոչ բարվոք վիճակը, դժվար հասանելիությունը, • միջոցառումները կազմակերպվում են հազվադեպ և ունեն ցածր հաճախելիություն:
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ
<ul style="list-style-type: none"> • Մպասարկման նյութատեխնիկական կարողությունների հզորացում, • գրոսաշրջային նոր երթուղիների մշակում, • էկոլոգիապես մաքուր սննդի արտադրության կազմակերպում, • ներքին գրոսաշրջության խթանում, • մշակութային միջոցառումների կազմակերպում, • ազգային ճաշատեսակների պատրաստման փառատոնների կազմակերպում, • գրոսաշրջային ապրանքի գնային քաղաքականության կարգավորում, • պետական կարգավորման դերի մեծացում, • գրոսաշրջային ենթակառուցվածքների 	<ul style="list-style-type: none"> • Զրոսաշրջային կազմակերպությունների թույլ համագործակցություն մայրաքաղաքում գործող գրոսաշրջային կազմակերպությունների հետ, • գրոսաշրջային կազմակերպությունների թույլ ներգրավվածություն միջազգային գրոսաշրջային ցուցահանդեսների և գրոսաշրջության ոլորտին առնչվող ֆորումներին, • հարկային դաշտի ոչ արդյունավետ պայմանների առկայություն, • մարդկային ռեսուրսների արտագաղթ, • անկազմակերպ գրոսաշրջություն:

Գարգացում, օդանավակայանի վերագործարկում, • հուշանվերների արտադրության և վաճառքի կազմակերպում:	
--	--

Անցած հինգ տարիների փորձը ցույց տվեց, որ «Տաթևի թևեր» ծրագիրն ՀՀ-ի առավել հաջողված ծրագրերից մեկն է հանդիսանում:

Գորիսի, Տաթևի զբոսաշրջային, կլաստերներում զբոսաշրջության զարգացումը խթանելու համար մարզի իշխանություններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, ոլորտի ընկերություններին և շահագրգիռ կազմակերպություններին առաջարկվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- նպաստել պատմական, ազգային-մշակութային, ագրո, էկո, արկածային և խոհանոցային զբոսաշրջության զարգացման,
- կազմակերպել մշակութային ամենամյա միջոցառումներ,
- Հին Խնձորեսկի տարածքում ստեղծել պատմական գյուղ,
- օժանդակել ձեռագործ գորգերի արտադրություն,
- իրականացնել զբոսաշրջային ռեսուրսների կադաստր, ստեղծել տարածքի զբոսաշրջային քարտեզն ու կայք էջ,
- մշակել բազմաբնույթ զբոսաշրջային երթուղիներ և հրատարակել բուկլետներ,
- շարունակական դասընթացներ կազմակերպել ծառայությունների ոլորտի աշխատակիցների համար,
- բնապատմական հուշարձանների ոչ անմիջական հարևանությամբ ստեղծել ավտոկայանատեղիներ, սննդի, առաջին անհրաժեշտության ապրանքների և հուշանվերների վաճառակետեր:

Այսօր հանրապետությունում այդ թվում նաև Գորիսի, Տաթևի տարածաշրջաններում զբոսաշրջության ոլորտի զարգացման ճանապարհին առկա են մի շարք խոչընդոտներ, որոնք անհրաժեշտ է հաղթահարել՝ զարգացման ներուժը արդյունավետությամբ օգտագործելու և զբոսաշրջության պետական քաղաքականությամբ սահմանված նպատակներին հասնելու համար: Այսպիսով, կլաստերների առանձնացումները և կիրառումը հնարավորություն կտա զբոսաշրջային ինդուստրիայի հետագա զարգացմանը, որոնցում լիարժեք կօգտագործվեն գոյություն ունեցող զբոսաշրջային ռեսուրսները:

Գրականություն

1. Դուրգալյան Է.Ռ., Թորոսյան Մ.Մ., Զբոսաշրջության տարածքային կազմակերպման վրա ազդող գործոնները, Կրթությունը և գիտությունը Արցախում, 3-4, Երևան 2014., էջ 95:
2. Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին ՀՀ օրենքը, ՀՀՊՏ 29.01.04./6(305), էջ 9:
3. Հայաստանի ազգային ատլաս. Հատոր Ա. Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն, ՊՈԱԿ, Երևան 2007, էջ 228, Մյունխիքի մարզ, էջ 220, 221:
4. Հայաստանի Հանրապետության Մյունիքի մարզի 2010-2013թ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, Կապան 2009, էջ 208:
5. Հայաստանի զբոսաշրջության հարավային միջանցքի ռազմավարական նախագիծ, Ազգային մրցունակության հիմնադրամ, Երևան, 2011, էջ 214:
6. Портер М. Конкуренция, Пер. с англ.-М., Изд. Дом <<Вильямс>>, 2005:

ПРЕДПОСЫЛКИ ФОРМИРОВАНИЯ ТУРИСТИЧЕСКИХ КЛАСТЕРОВ В РЕГИОНАХ ГОРИСА И ТАТЕВА

Э. Р. Дургарян - к.г.н., ассистент, ЕГУ

Ключевые слова: регион, кластер, туристическая индустрия, туристические ресурсы, инфраструктура, потенциал развития.

Аннотация. В статье обсуждается важность кластеров в деле организации туристической сферы. Регионы Гориса и Татева уже стали ведущими центрами развития РА благодаря имеющимся историко-культурным и природным ресурсам. Последние выступают предпосылками для формирования кластеров. Составлена карта туристических кластеров регионов Гориса и Татева.

THE PRE-CONDITIONS OF TOURISM CLUSTERS FORMATION (IN CASE OF GORIS AND TATEV REGIONS)

E. R. Durgaryan, PhD, assistant YSU

Keywords: region, cluster, tourism industry, tourism resources, infrastructure, development potential.

Annotation: In this article the importance of clusters in organizing tourism sphere was discussed. In the RA Goris and Tatev have already become the leading centers of development due to the existence of rich historical-cultural and natural monuments. The latter are sufficient background for developing tourism clusters in above-mentioned regions. Tourism clusters map for Goris and Tatev regions was designed.

ԿՐԻՄԱՆՅԷ ՀՈՎՏԷ ԶՐՈՍԱՇՐՋԱ-ՌԵԿՐԵՍԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ա. Վ. ՈՒԼԻՔՅԱՆՅԱՆ, ԵՊՀ ԻՄ, aulixanyan@mail.ru

Բանալի բառեր. Տավուշի մարզ, Կիրանցի հովիտ, զբոսաշրջա-ռեկրեացիոն ներուժ, Կուսեն բնակատեղի, Առաքելոց վանք, Կիրանցի վանք, Ղեղձնուտի վանք, Սամսոնի վանք, զբոսաշրջային երթուղի:

Հանրահունքային ռեսուրսներով աղքատ Տավուշի տարածաշրջանում տնտեսական նշանակություն կարող է ձեռք բերել ցանկացած աննշան ռեսուրս, որը կարող է որոշակի օգուտներ բերել տարածքին: Այս տեսակետից արդիական է ցանկացած տարածքի ռեսուրսային, մասնավորապես՝ զբոսաշրջա-ռեկրեացիոն ներուժի վերլուծությունը և գնահատումը, որը կարող է ինչ-որ չափով նպաստել տարածքի ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը:

Կիրանցի հովիտն ունի հարուստ և բազմազան ռեկրեացիոն ռեսուրսներ: Այստեղ առանձնահատուկ նշանակություն ունեն բնական ռեկրեացիոն ռեսուրսները, որոնցով Տավուշը շահեկանորեն տարբերվում է ՀՀ մյուս մարզերից: Այսպիսի ռեսուրսների առկայությունը և դրանց հիման վրա զբոսաշրջության տարբեր տեսակների/էկոլոգիական, առողջարարական և այլն/ զարգացումն առաջիկա տարիներին կարող է դառնալ մարզում զբոսաշրջության զարգացման լուրջ խթան:

Հրաշալի բնական համալիրներից բացի, Կիրանցի հովիտը հարուստ է նաև անգույնական պատմաճարտարապետական հուշարձաններով: **Հայաստանի ոչ մի տարածաշրջանում, նման փոքր տարածքում, նշանավոր վանքերի ու եկեղեցիների այդքան քանակ չկա:** ՀՀ կառավարության կողմից 2002 թ. հաստատվել է Կիրանցի հովտի պատմության և մշակույթի 89 հուշարձան [2]:

Հովտում առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում նաև բերդերն ու ամրոց-